

Թատրոնը հասարակաց կրթարան եւ զորոց գոյութիւնը հա-
նուր լուծարելու անհրաժեշտ պիտոյք ամենայն քա-
ղաքներէ մէջ շինել թատրոնական բեմ եւ բարենպաստակ-
նէր հայացմունք տալ, ուստի կարեւոր կ'համարուի նորա գոյութեան
եւ ցոյց տուած օգուտներէ վերայ խօսել համառօտապէս։
Թատրոնի գոյութիւնը հին ազգերի մէջ որոնելով, կ'գտնենք
պատմութեան մէջ, որ Հելլեններ (նախնի Յոյներ) մեծ յաջո-
ղակութիւն ունէին թատերգութեան մէջ, իսկ Հռոմայեցի-
ներ այն պատիճան ծաղկեցրին եւ ընդհանրացրին, մինչ մեծ
փառաւորութեան հասցրին եւ կրօնական արարողութեան հետ
միացրին, ուր իւրաքանչիւր հանճարաւոր, ուսումնական կամ
արհեստավոր, ուժեղ կամ որ եւ իցէ բնական կամ յատուկ
ձիրք ունեցողներ ի հրապարակ կ'հանէին իւրեանց հանճարն
եւ գործութիւնը, կներկայացնէին զիւցաղներէ գործերն, կող-
բային նոցա կորստեան վերայ, կծաղրէին մոլութիւններն եւ
կյորդորէին վարդիկ հետեւել բարոյականութեան, ըստ այնմ
կընդունէին հասարակաց յարգն ու համակրութիւնն եւ վե-
հապետներէ եւս կստանային պսակներ, որով օր ըստ օրէ կը-
յաւելանար հանճարաւորների թիւն յօգուտ ազգի եւ հայրե-
նիքի։

Հայերի մէջ եւս կար թատրոնի գոյութիւն Քրիստոսէն կէս
դար յառաջ, ըստ պատմութեան Պլուտարքոսի որ Կրասոսի
վարքի մէջ կգրէ թէ երբ Պարթեւներ (Հայերի եւ Պարսիկների)
գէտ յանձնաւ յարուցած պատերազմի մէջ յաղթվեցաւ ու
մեռաւ Կրասոս, Սուրէն նորա գլուխն եւ ձեռներն ուղարկեց
Հայաստան, որի վերայ հայ Արտաւազդ Ա. թագաւորը մեծ ու
հանգիստաւոր ողբերգութիւն մի կատարել տուաւ ներկայու-
թեամբ Պարսիկների Արշէլ թագաւորի, եւ ինքն Արտաւազդ թէ-
պէտ զբօսասէր կեանք ունէր եւ թոյլ կառավարութիւն, բայց
մեծ սէր ունէր թատերգութեան, եւ շատ թատերգութիւններ
եւս գրած էր, քաջ համոված լինելով որ թատրոնը հասարա-

կաց զԵսաբան, իբրեւրան եւ Դասարան է: Բայց մենք այս հետադո-
տութիւնն հնազանդականութիւններին թաղնելով իմաստասիրել,
ներկայ 19-րդ դարի մէջ մեր թատրոնի զարգացումն եւ յառա-
ջագիմնութիւնն ի նկատի առնենք:

Եւրոպան կոպարծիքիւր նախնի եւ այժմեան ընտիր հեղինակ-
ների վերայ, որոնք թատերգութեան մեծ գործնական առած են իւ-
րեանց գրչով եւ այժմ ընդ որովիւ կապարեալ ընդ թեան մէջ
դրած են, այնպէս որ ամենայն քաղաքների մէջ աչքի զարնող
շէնքերի կարգ մնած է թատրոնը, այսինքն եկեղեցու, Աստու-
նարանի եւ Պալատի: Թէ Եւրոպայի եւ թէ Ասիայի մէջ բնակող
Հայերն եւս ընդունակ գոյով լուսնաորութեան եւ յառաջագի-
մնութեան միջոցներ ձեռք բերելու, ուստի նախ վենետիկի, ա-
Հայերի, ակսան գրել թատերգութեան, օգտակարութեան վե-
րայ, եւ աշխատասիրելին ազգային կեանքից առած ընտիր եւ
ազգու ազգերգութիւններ, որոնց հետեւեցան Վ. Պօլոն եւ
Չմիւս ռուսիայի Հայեր, որոնք ոչ միայն գրեցին թատերգութիւն-
ներ այլ եւ պատրաստեցին հայկական թատրոններ եւ թատրոնա-
կան բեմեր, որով մեծ գործնական մտաւոր, յառաջագիմնութեան
բարոյական կրթութեան եւ հայրենասիրութեան քննութեան
Վանանդեցեանների եւ Մ. Պէշիկթաշլեանի շնորհով կազմած
թատրոնասէրների ընկերութիւններ, որ օր քսաօրէ ընդհան-
րանալով տաճկահայերի զանազան քաղաքների մէջ, վանեցապա-
գասիրութեան ոգին եւ արթնցրեց ազգային զգացմունք: *

Հ. Խրիմեանի շնորհով Մշոյ Ս. Կարապետի եւ Վարանդայ
Վանքի մէջ եւս եղան թատերգութեան հանդէսներ, եւ մենք
եւս Վանի մէջ տասն տարի շարունակ ներկայացմունք տպու-
յաջողեցանք յօգուտ ուսումնարանների: Ռուսահայերի մէջ ա-
ռաջին անգամ հայկական թատրոն ներկայացրած են Մօսկովայի
համալսարանի հայադէմ ուսանողները 1858 թուին մեծարեւ-
միքայել Սահակեանի տանը: Թէ ոգոսիտ, Թիֆլիս երեսն
Բագու, Շուշի, Վաղարշապատ եւ ուրիշ տեղեր եղան հետզհետեւ
բարենպաստակ ներկայացմունք բարոյական եւ նիւթական ծ-
գուաներ տալով հայ հասարակութեան: Այսչափ բաւական հա-
մարելով թատրոնի գոյութեան վերայ խօսել, արժան կհամար-
վիմ փոքր ինչ ընդարձակ խօսել նորա բազմակողմանի օգուտ

ներկայեցայ թերեւս մեր ձայնն արձագանգ տայ «Արարաւ»
 ամենագրի շնորհով եւ ընդ հանրանայ թատրոնի հարկն ու պի-
 տոյքն ոյն թոյլ գիւղերի մէջ եւ ազգային լրագիրների եւ ամ-
 սագիրների խմբագրօղները բարեհաճին իւրեանց առաջնորդող
 յօդուածներ հոսիրել թատրոնատիրութիւնն ընդ հանրայնելոս
 Հայերի մէջ որովհետեւ ինչպէս ամեն ազգերի նմանապէս եւ
 մեր ազգի յառաջագիմութիւն կախեալ է բացի եկեղեցուց եւ
 քննողից, ուսումնարաններէց, պարբերական թերթերից եւ
 թատրոններից որոնք որքան շատական եւ յառաջագիմեն նոյն
 աստիճանով եւ հայ ազգն կմտնեայ իւր նպատակին բարոյա-
 պէս եւ նիւթապէս։ Բայց ցաւալի ճշմարտութիւն է ասել որ
 Հայը անկաւին շատ հեռու է մնացել լուսաւորութիւն ազգերի
 շաղի մէջ իւր կրօնի քայլուածով եւ գառնութեամբ գիտե-
 լով իւր ազգայի դերագր։ Եւ ամենայնոյն պէտք է վազէ որ ըն-
 կերին հասնէ ու բեմ մեր բարոյական եւ նիւթական ոյժն
 կրկնապատկերուենք ամեն հայաբնակ գիւղերի եւ քաղաքնե-
 րի մէջ եկեղեցիներ բարեդարգելուց յետոյ բանալով բարե-
 կարգ ուսումնարաններ եւ թատրոններ, բողոքատուներով բա-
 րեխիղճ պարբերական թերթեր մեր մէջ ու սոսմնարաններով կրթ-
 թենք եւ պատրաստենք անպագայ սերունդն իսկ թատրոններ
 ընդ եւ պարբերական թերթերով կրթենք ներկայ հասարակութիւնն
 սոսմնարաններով պատրաստենք բարոյիչներ եւ խմբագրօղ-
 ներ ու հեղինակներ թատերագուներ իսկ թատրոնների նիւթա-
 կան օգնականներով օգնենք ուսումնարաններին։ Այսպէս փո-
 խոնդարձ օգնութեամբ յառաջ մղենք ազգային նաւն դէպի
 խաղաղ նաւագահանգիստ։ Այս սրբազան նպատակն այն ժամա-
 նակ կիրառարժիլ երբ ճշմարտասէր խմբագրօղներ ի բոց
 թողնելով կուսակցական ոգին անօգուտ բամբասանքներով եւ
 մեղադրանքներով լինամակներ տպելուց դադարելով եւ հը-
 րա հանդիս եւ զարգացողից յօդուածներ հրատարակելով մի
 ուղղութեամբ եւ մի նպատակով գործեն ինչն ինչ ազգային
 նաւին ուսումնարան եւ թատրոն լիակենց ինչն ինչ իսկ հոգեւո-
 րականներ կէտակալենք դառնան եւ ամենքիւ միաբան շահն իրեն
 յաջողակ հոգի գեցնեն առագայական եւ մղեն նաւը դէպի նը-
 պատակն։ Ապագայ սերունդ մանուկներ ուսումնարանների

բարեկարգութեամբ յառնջ մտնին իսկ ներկայ Տառապնակոյ
 թիւն: մեր հայրեր, մայրեր, քոյրեր եւ եղբայրներ թատրօններ
 ըով եւ պարբերաթերթերով կրթութիւն լուսաւորովին: Եւ որով
 հետեւ մեր նպատակն է թատրօնի օգնակաների վերայ խօսել
 որ հասարակաց կրթական, բնասական եւ գիշտական կոչեցինք, ուստի ա-
 պացոյցանենք: Ի՞նչ քաջ մտնող մտնող մտնող մտնող մտնող
 Յայտնի ճշմարտութիւն է որ մարդը աւելի կհաւատայ իւր
 աչքերի տեսողութեան քան ականջների լսողութեան: որովհե-
 տեւ աչքերի տեսողութեամբ աւելի կտպաւորովին մտքի մէջ ար-
 տաքին երեւոյթներ: հազարաւոր տարիներով անցեալ պատ-
 մութիւններ, քան ականջների լսողութեամբ կամ կարգաւոր
 պատմութեան մէջ: Թատրօնի մէջ դերասանը իբրեւ ճշմարիտ
 պատկեր է իրականութեան, կներկայացնէ այն ամենը, ինչ որ
 գործված է յայտնի կամ գաղտնի գործով կամ լորտհրդով
 արդարութիւն կամ անիրաւութիւն: ճշմարտութիւն կամ
 ստութիւն: իսկ հանգիստականներ պարզապէս կտեսնեն իւրեանց
 վարքն ու բարքը եւ նոյն իսկ խորհուրդ եւ նպատակ ու գոր-
 ծեր դերասանի վերայ ինչպէս հայելու մէջ: Կրկին անաչտոյ
 վառարան, վկայ եւ գատաւոր: Թատրօնի բեմի վերայ ահի
 յանդիման կտեսնէ անիրաւն իւր անիրաւութեան չար հետեւ
 ւանքն: նախանձոտն կնկատէ իւր սխալմունքն: եղեռնագործն
 կտեսնէ իւր կրեւի պատիժն այստեղ կամ միւս կեանքում:
 վերջապէս մոլին իւր արեղ կերպարանքը կտեսնէ եւ կսկսէ
 զզվել ու դառնալ դէպի ուղիղ ճանապարհ: ինչպէս երեւելի
 բանաստեղծ անգլիացի Շէկսպիր, որ աւագակնապետ էր երբեմն:
 մի օր պատահմամբ նա թատրօն մտաւ, տեսաւ որ կներկայա-
 ցնէին աւագակներ ի կեանք եւ վախճան մահի պատիժ եւ իայ-
 տառակութիւն: իսկոյն զզվելով իւր մոլութեան վերայ ներկայա-
 ցաւ թատրօնի վերատեսչին: յօժարութեամբ տուաւ իւր բոլոր
 ունեցած հարստութիւնն ու եղաւ դերասան: յետոյ երեւելի
 բանաստեղծ առաքինի անձն եւ մարդկութեան դաստիարակ-
 ներից մին: Այսպէս հազարաւոր անձներ թատրօնի մէջ տես-
 նելով իւրեանց կեանքը ու վախճանն, բարեգործն իւր վարձը
 իսկ մոլին իւր պատիժը, բարեգործն սկսել է քաջալերվել իւր
 վսեմ գործերի մէջ եւ սկսել է զխցողնական առաքինութեան

հետեւել, կրկնապատկելով իւր ջանքն, իսկ մոյին զգլելով իւր տգեղ գործերի վերայ, հետեւած է առաքինութեան: Մեծն Նապոլէօն կանէ եթէ ուսումնարանից կծնվին քաջեր եւ առաքինիներ, թաւրօնից կծնվին դիւցազներ եւ հանճարներ: Ուստի ուսումնարանի մէջ կկրթվին մատաղահասներ 7—20 տարեկաններ, որոնք իբրեւ առողջ անձներ կուսանին առողջապահութեան կանոններն, իսկ թաւրօնի մէջ 7—100 տարեկան զանազան ակտեքով հիւանդացածներ կրժշկվին, ուսումնարանի մէջ կուսանին հեաեւել բնութեան բարոյակաւոնութեան, իսկ թաւրօնի մէջ կուսանին իւրաց թողնել արմատացած եւ երկրորդ բնութիւնն դարձած մոլութիւններ եւ յետոյ հետեւել բնութեան — բնական առաքինութեան: Անշուշտ մեծ դժուարութիւն է հիւանդն բժշկել, քան առողջն պահպանել հիւանդութենից եւ մեծ աշխատութեան կարօտի սխալ եւ սուտ գիտութիւններ եւ նախադաշարմունք մօռացնել եւ յետոյ ճշմարտութիւն ուսուցանել, ինչպէս Տիմաթէոս ուսուցից քննադատութեան կրկին վարձ կպահանջէր այն աշակերտից, որ կանխաւ օգէտ քննադատի աշակերտած էր, ապելով թէ «հեյտ է բնական չուղածն ուսուցանել քան մոռացնել վատ ուսանք»: Այսպէս նաեւ եթէ ուսումնարանի մէջ աւանդած մի դասն արժէ մի բուբլի արծաթ, իսկ թաւրօնի մի դասն արժէ երկու բուբլի արծաթ, ուր իբրեւ զրօսանք կուսանին սիրել բարին եւ ստել չարը եւ ամեն ինչ որ իբրեւ զրօսանք կաւանդվի, անմոռաց կտպաւորվի մօքի մէջ, իսկ ինչ որ իբրեւ պարտաւորութիւն կստիպվին ուսանել, բազում անգամ կրկնելով սերտելով եւ մեծ աշխատութեամբ հազիւ կտպաւորվի: Դաստիարակ (պատմութեան կամ բարոյագիտութեան եւն) ինչ դեր որ կխաղայ ուսումնարանի մէջ, նոյն դերն դերասանը կկատարէ թաւրօնի բեմի վերայ: Ի՞նչ են աշակերտներ ուսումնարանի մէջ, նոյն են եւ հանգիստութեան թաւրօնի մէջ: Իբրեւ փարձ եւ սուտ գութիւն մեր անածներէ, Վարդանի գուստր Նուշանիկի պատմութիւնը ասել տանք պատմութեան դաստաւանին կամ աշակերտին, եւ յետոյ ներկայացնող դերասանին կամ անգրագէտ հանգիստեսին, կգանենք շատ մեծ տարբերութիւն մի եւ նոյն պատմութեան մէջ, վերջինն աւելի զգայուն եւ կատարեալ: Ուրեմն թաւրօնը իբրեւ կենդանի պատմութիւն եւ պատկեր է անցեալ կամ ներկայ գործառնութիւնների եւ պարզ հայելի ու խոշորացոյց: թաւրօնը իբրեւ թաւրօնի պաշտօն կատարելուց, հայրենասիրութեան եւ ազգասիրութեան գրգռել է ինքն է անտարբերութեան, ապագայի յայն է թմրութեան քնից զարթեցնելու եւ ի գործ հրաւիրելու, մեծահնչիւն պահպանել է եւ տառապանքը ցրուեալներն ի մի հաւաքելու: Վերջապէս չկայ այնպիսի գորաւոր գրգռիչ եւ համոզիչ ձեռնարկ մի որ

կարօղ լինի մրցել թատրոնի հետ, փասն զի ինչպէս ասացինք թատրոնը պարզ մեծ հայելի է. նորա մէջ ամեն որ կնիատէ իւր եւ որ թիւերի պատկերներ, որոնց կսիրահարի կամ կզգովի թատրոնը անցեալ, ներկայ եւ անպահանջ գործերի ցաւակ է եւ ճարտարութեան եւ անսխալ պլանակի, նորա մէջ կտեսնվին մարդիկներ զազանի գործերն եւ նոցա հետեւութիւններն, ուր ինչպէս ասացինք, գերապանն է իբրեւ գործող անձն, իսկ հանգիստեան է անաչառ վիայ, փաստաբան եւ միանգամայն դատաւոր. թատրոնի բեմի վերայ հրապարակաւ կտեսնվին ճշմարիտ հայրենասէրի եւ առաքինիների գովելի գործերն, նորա մէջ կյիշատակվին նոցա անմահ անունները, որ զօրաւոր շարժառիթ կլինին հասարակութեան, օրելու ազգն եւ հայրենիքը պատուել եղբայրներ եւ ամեն առաքինի անձներ:

Վասն զի աչքերի տեսողութեամբ եւ օրինակով աւելի կյոր գորվին մարդիկ նմանօր լինել առաքինիներին, քան չոր եւ ցամաք խրատներով կամ կարգալով գրքի մէջ: Տկար անձներն անգամ երբ զիտեն երկու մարդիկների միմեանց յաղթելու ջանքն, ինքեանք եւս ներքին գրգռում մի կզգան մեղամարտելու, թէ եւ անկարօղ են, իսկ ուժեղներն իսկոյն ասպարէղ կիջնեն իւրեանց այժն ցոյց տալու եւ յաղթութեան մրցանակն ստանալու: Թատրոնը պատկերազարդ դասարան է եւ դասագիրք, ուր երկու ժամի մէջ անգրագէտն իսկ կդասանի հեշտութեամբ այն ամենը, ինչ որ գրագէտն դասագրքով բազում աշխատութեամբ երկար միջոց հազիւ սովորած է: Թատրոնը հասարակաց գաղափարների, զգացմունքի, մտքի, սրտի, կրքերի եւ հոգու կրթութեան ասանար է: Թատրոնի մէջ մի փոքրիկ ծիծաղն կամ լաց, քարկուծիւն կամ երկիւղ, ծափահարութիւն կամ արհամարհութիւն մեծ նշանակութիւններ ունի եւ յատուկ նպատակներ: Եւ այն գերասանը, որ իսկութեամբ իւր դերի մէջ մտած է, սերահոգութեամբ, յայնու, շարժառիթով, կերպարանով, լիքով, զգեստով եւ ամենայն հանգամանքով նա քաջ դասախօս է, եւ իւր աւանդած դասերն անջինջ կտալաւորէ: Հանդիսականների մտքի մէջ, եւ այն թատերգութեան նիւթը, որ առնելոված է պզտիկ կեանքից կամ հոգիան աշխարհից, կդնենայ անշուշտ իւր բարոյական եւ նիւթական օգուտներ:

Ուստի իբրեւ եղբակացութիւն եւ բովանդակութիւն մեր ասածների, կներեմ ինձ ասել, որ պիտի գայ մի ժամանակ եւ արդէն իսկ սկսած է, որ Հայերի մէջ եւս այնչափ կարեւոր համարվի թատրոնական բեմը, մինչ հաւասարվի նուիրական շինուածներին, այսինքն ուր կայ եկեղեցի, կից պիտի լինին նորան մի կամ երկու երկսեռ դպրոցներ, ուր կան երկօրե դպրոցներ, կից պիտի լինի նոցա մի թատրոն, ուր կայ եկեղեցի, դպրոց եւ թատրոն, նոյն բնակիչներ պիտի լինին ամենքը ընթերցասէր եւ ուսումնասէր, բարի մարդ եւ բարի քրիստոնէ:

նեայ, եւ ընդհանուր ազգն պիտի համարփի յուսաւորութեան, յառաջագիմութեան եւ քաղաքակրթութեան ու ինքնավարութեան ընդունակ ազգ մի: Թէպէտ յետ մնայինք, բայց լաւ է անազան քան ոչ երբէք:

Խօսքերս մասնաւորելով Վաղարշապատի նորաշէն թատրոնական բեմի եւ դերատանական խմբի մեծ պարօնների ազգիս մատուցած ծառայութեան վերայ, մեր կողմից իբրեւ շնորհակալութեան նշան, համառօտապէս կնկարագրենք նոցա ազգօգուտ եւ բարենպաստելի գործառնութիւնը: Սակայն այս յմասն Վաղարշապատի մէջ մի քանի եղանակուն երկատարացներէ (որոնց սարագլուխներ են պ. Նաւասարդեանը, պ. Սագինեանը, պ. Վարդանեանը, պ. Սմբատեանը, պ. Ասլանեանը, պ. Գառնեանը, պ. Տէր Անտօնեանը, եւ ուրիշներ) սկսած 1874*) տարուց, տարին մի քանի բարեգործական ներկայացմունք տուած էին յօգուտ տեղիս երկսեռ ծխական դպրոցանոցների, որոնք այս տարի երկսեռ դպրոցների Մեծ Շոգարաւ ձուների եւ պ. Ս. Աբամէլիքեանի աշխատակցութեամբ յաջողեցան մի հաստատուն բեմ պատրաստել պրական դպրոցի մէջ որքան ներեցին տեղի եւ ժամանակի հանգամանքները: Խորին շնորհակալութեամբ կշիռենք վերոյիշյալ անձների թէ նիւթական նպաստաւորութիւն եւ թէ դերատանական ախտոցութիւն: Դրոնք երէք ներկայացուած տուն կրկին յօգուտ տեղիս երկսեռ դպրոցների, Նաեւ շնորհակալութիւն Գեորգեան Ջեմարանի նկարչութեան ուսուցչի պ. Ա. Սագինեանին, որը բարեօրութեամբ աշխատեց թատրոնական բեմի պարագաները նրկարելու, որ եւ արժանի է ամենայն դուրսութեան:

Առաջին ներկայացրած նիւթն էր Ներսէս եւ Վռնակ, ողբերգութիւն, երկու վօգեփիլներով «Վայ իմ կորած յիօուն ոսկի» եւ «Պիպօի տիճուրը», երկրորդն էր «Արշակ Բ», ողբերգութիւն եւ մի վօգեփիլ «Գալալ Վազ» իսկ երրորդն էր Շուշանիկ ողբերգութիւն եւ մի վօգեփիլ «Երկուսս էլ քաղցած ենք եւ երկուսս էլ փող չունենք»: Բաւականին յաջողակութեամբ կատարեցին իրենանց դերերն եւ գրաւեցին ներկայ հանդիսականների յարգն ու համարումն, որի ապացոյց էին ամբողջ տոմսակների ծախվելն, յաճախակի ծախահարութիւններ, կեցցէների գոցումն եւ շնորհակալութիւն: Հանդիսականների սէրն ու համակրութիւն գրաւեցին Մեծ Տիկին Խանազեանը եւ Սրիսրդ Յարութիւնեան, որոնք առ ոչինչ համարելով արգելքներ, բարեհաճեցան հանդէս դալ մեծ յա-

(*) Ի՞նչ ստոյգ աղբիւրից տեղեկացել ենք, որ 1874 թուին Վաղարշապատում թատրոնի ներկայացման հիմնադիր եղել է պ. Մ. Վարդանեանը եւ յետոյ 1876 թուին կազմված է սոյն դերասանական խումբը:

ջգգահուիթեամբ կատարել իւրեանց դերերն: Զառարինն — Ռոմ տիկի դերն: Երկրորդն — Շուշանիկի դերն: որոնց կմատուցանենք մեր խորին շնորհակալութիւն: որ պատուեցին Վաղարշապատի նորաշէն թատրոնական բեմն իւրեանց բարեգործական ներկայացմամբ: Թատրոնի եկամուտն եղաւ 340 մ:

Աեր նպատակից դուրս գոլով իւրաքանչիւրի դերի յաջուրս կութեան աստիճանի քննդատութիւններ անելն: այսչափ միայն կասենք, որ յարգելի խաղացողներն արին ինչ որ կարող էին անել նիւթապէս եւ բարոյապէս: աւելի կարօգութիւն ունեցողներն թող անեն աւելի լաւն եւ ստանան աւելի սէր եւ յարգանք: Բժախնդիր իմաստական գիտեն միայն ծաղրել եւ արհամարհել ամենալաւ գործն իսկ ընդունակ չլինելով իւրեանք օչինք բարի գործի: Եւ ինչ որ զոգարանեալ է իւրեանց մեծ Ուստի մենք շնորհակալութիւն կ'յայտենք Վաղարշապատի երկսեռ դպրոցների Մեծ, Հոգաբարձուներին: պ. Ս. Բաւմելիքեանին: պ. Սաղինեանին եւ յարգելի խաղացողներին: որոնք վաղ գգացին Վաղարշապատի մեջ թատրոնական բեմի կարեւորութիւն եւ հոգացին որքան կներէին հանգամանք եւ ժամանակ: Զանազան գիտենալով: որ ամենայն նորութիւն ունի իւր ներքի նպականութիւններն: որոնք շուտով կարելի է ուղղել եւ կատարելութեան հասցնել:

Թող ներեն ինձ թատրոնական բեմի մեծ հիմնադիրներն: Եւ այն ազգասէր անձներ, որ համակրած են սոյն գործին: Թեպէտ ես փոքրիկ մի անձն եմ: բայց մեծ առաջարկութիւն կանեմ: գիտենալով որ փոքրիկ շիւղն եւս ունի իւր օգտակար ծառայութիւն: այսինքն կառաջարկեմ մի թատրոնի չլինութեան ձեռնարկելու համար: նախ քան որ թեան գիմել հետեւեալ պարմաներով: ապել լոռմաններ անելու: Եւ ինչպէս եւ ինչպիսիք թեան սոցմականներ տան իրենց ազգասէրներին: որոնք բարեհասին նաեւ գրիւն չլինութեան թատրոնի: իսկ հաջուելի տոմսակով: հաւաքել: Բնիստութիւն: չլինութեանից յետոյ ընտ կամեցողութեան սոցմակ առաջարկողների: Եւ ներկայացման տոմսակ եւ հաջուել: Եւ լոռմանակներին եւս առանց ջահել եւրեք տարվան միջոցով: Եւ յաջաւարդ իւրեանց: Եւ զործել ձեռնհաս ազգասէրներին: Թողնելով: Եւ ինչպէս յոգաւածս սոյն բառերով: Երկսեռ դպրոց: Թատրոն: Եւ արեւելի: Եւ ազգ: որ հոգնի: նախ թող չյուսայ բարեք: Եւ ինչպիսի:

Ս. Բ. ԳԼԵՆԷ.

Առաջագրաւ միջոց 1881 թ. զմ յոգաւարտ օգոստոս ամսին (*) 1881 թ. առաջագրաւ միջոց 13. Եւ ինչպիսի մանրակրկիտ փնտրումն նախ: Եւ ինչպիսի մանրակրկիտ փնտրումն նախ 3 ծախսերով միջոց